

# Գործնական ուղեցույց

## Միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդություններ<sup>1</sup>

### (Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոն)

Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն Դատարանը կարող է կիրառել միջանկյալ միջոցներ, որոնք պարտադիր են պատասխանող պետության համար:

Միջանկյալ միջոցները կիրառվում են միայն բացառիկ դեպքերում: Դատարանը հրահանգում է անդամ պետությանը միջանկյալ միջոցներ կիրառել միայն այն դեպքում, երբ ուսումնասիրելով բոլոր համապատասխան նյութերը՝ այն գտնում է, որ հակառակ դեպքում դիմողին սպառնում է անդառնալի վնաս կրելու իրական վտանգ:

Դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդություններ ներկայացնող դիմողները կամ նրանց ներկայացուցիչները<sup>2</sup> պետք է պահպանեն ստորև նշված պահանջները:

#### I. Կից ներկայացվող տեղեկություններ

Դատարան ներկայացվող ցանկացած միջնորդություն պետք է լինի հիմնավորված: Մասնավորապես, դիմողը պետք է հանգամանալից կերպով նշի այն հիմքերը, որոնցով պայմանավորված են իր որոշակի վախերը, ենթադրյալ վտանգի բնույթը և Կոնվենցիայի այն դրույթները, որոնք իր պնդմամբ խախտվել են:

Ներպետական վարույթներում կամ այլ փաստաթղթերում ներկայացված փաստարկներին պարզապես հղում անելը բավարար չէ: Կարևոր է միջնորդությանը կցել բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես՝ համապատասխան ներպետական դատարանների կամ այլ լիազոր մարմինների որոշումները, ինչպես նաև ցանկացած այլ նյութ, որը դիմողի կարծիքով կարող է հիմնավորել իր պնդումները:

Որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ չպարունակող միջնորդությունները որպես կանոն չեն հանձնվում դատավորի որոշման: Դատարանը կարող է նաև կապ չհաստատել միջանկյալ միջոցներ կիրառելու թերի միջնորդություններ ներկայացրած դիմողների հետ:

Եթե գործն արդեն գտնվում է Դատարանի վարույթում, ապա անհրաժեշտ է նշել դիմումին տրված համարը:

Արտաքսման կամ հանձնման վերաբերյալ գործերով անհրաժեշտ է ներկայացնել երկրից տեղափոխման ամսաթիվն ու ժամը, դիմողի հասցեն կամ կալանավորման վայրը և ներպետական գործի համարը: Այս տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին պետք է անհապաղ հայտնել Դատարանին (երկրից տեղափոխման ամսաթիվն ու ժամը, հասցեն և այլն):

Հնարավորության դեպքում միջնորդությունները պետք է ներկայացվեն Պայմանավորվող կողմերի պաշտոնական լեզուներից մեկով:

1. Դատարանի կանոնակարգի 32-րդ կանոնի համաձայն Դատարանի նախագահի կողմից 2003 թ. մարտի 5-ին ընդունված գործնական ուղեցույց՝ 2009 թ. հոկտեմբերի 16-ին, 2011 թ. հուլիսի 7-ին և 2022 թ. մայիսի 3-ին կատարված փոփոխություններով:

2. Կարևոր է տրամադրել ամբողջական կոնտակտային տվյալներ:

Հնարավոր է, որ Դատարանը միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդությունը քննելու հետ միաժամանակ որոշում կայացնի նաև գործի ընդունելիության վերաբերյալ:

## II. Միջնորդությունները հարկավոր է ներկայացնել «ECHR Rule 39 Site» կայքի, ֆաքսի կամ փոստի միջոցով

39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդություններն անհրաժեշտ է ուղարկել ECHR Rule 39 Site կայքի միջոցով, ֆաքսով կամ փոստով<sup>3</sup>: Էլեկտրոնային փոստով ուղարկված միջնորդությունները ենթակա չեն Դատարանի կողմից քննության: Փոստով կամ ֆաքսով ուղարկված բոլոր միջնորդությունների առաջին էջին թավ տառատեսակով պետք է նշել հետևյալը.

**«Rule 39 – Urgent / 39-րդ կանոն – հրատապ  
Հետադարձ կապ (անձի անուն, ազգանուն և կոնտակտային տվյալներ)՝ ...**

**[ Արտաքսման կամ հանձնման գործերով ]**

**Երկրից տեղափոխման նախատեսված ամսաթիվը, ժամը և տեղափոխման երկիրը ... »**

## III. Միջնորդությունները ժամանակին ներկայացնելը

Որպես կանոն միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդությունները պետք է ուղարկել հնարավորինս շուտ՝ ներպետական վերջնական որոշումից անմիջապես հետո, որպեսզի Դատարանը և նրա Քարտուղարությունը բավարար ժամանակ ունենան հարցը քննելու համար: Հնարավոր է, որ Դատարանը չկարողանա քննության առնել արտաքսման կամ հանձնման գործերով ներկայացված միջնորդությունները՝ երկրից տեղափոխման նախատեսված ժամից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ դրանք չստանալու դեպքում<sup>4</sup>:

Երբ ներպետական վերջնական որոշման ընդունումը անխուսափելի է, և կա այն անմիջապես ի կատար ածելու վտանգ (հատկապես արտաքսման կամ հանձնման գործերով), ապա դիմողները և նրանց ներկայացուցիչները միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդություն պետք է ներկայացնեն առանց այդ որոշմանը սպասելու՝ հստակ նշելով դրա ընդունման նախատեսված ամսաթիվը, ինչպես նաև այն, որ իրենց միջնորդությունը կախված է ներպետական վերջնական որոշման բացասական լինելուց:

## IV. Կասեցնող ուժ ունեցող ներպետական միջոցներ

Դատարանը ներպետական դատարանների կայացրած որոշումները չի վերանայում, ուստի արտաքսման կամ հանձնման գործերով դիմողները պետք է սպառեն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, որոնք կարող են կասեցնել երկրից տեղափոխումը նախքան միջանկյալ միջոցներ կիրառելու միջնորդությամբ Դատարան դիմելը: Եթե դիմողը դեռևս հնարավորություն ունի օգտվելու կասեցնող ուժ ունեցող իրավական պաշտպանության ներպետական միջոցներից, Դատարանը չի կիրառի 39-րդ կանոնը երկրից տեղափոխումը կանխարգելելու համար:

3. Հարկավոր է նկատի ունենալ, որ միջնորդությունները փոստով ուղարկելու դեպքում պետք է օգտվել արագընթաց փոստային ծառայություններից:

4. Դատարանի քարտուղարությունը փակ է պետական տոներին և այլ ոչ աշխատանքային օրերին, որոնց ցանկին կարելի է ծանոթանալ Դատարանի կայքում՝ [www.echr.coe.int/contact](http://www.echr.coe.int/contact):

## **V. Հետագա քայլեր**

39-րդ կանոնի համաձայն միջանկյալ միջոցի կիրառման նպատակով Դատարան դիմողները պետք է հետևողականորեն պատասխանեն Դատարանի քարտուղարության կողմից ստացված հաղորդագրություններին: Մասնավորապես, այն դեպքերում, երբ Դատարանը մերժել է միջանկյալ միջոց կիրառելու միջնորդությունը, դիմողը պետք է հաստատի իր դիմումին հետամուտ լինելու ցանկությունը: Եթե Դատարանը բավարարել է միջնորդությունը, ապա դիմողը պարտավոր է պարբերաբար և անհապաղ Դատարանին տեղեկացնել ընթացիկ ներպետական վարույթների զարգացումների մասին: Հակառակ դեպքում գործը կարող է հանվել Դատարանի գործերի ցուցակից: